ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1027 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 07/80-2/16483-14 և հոկտեմբերի 8-ի N 06/3-3/16673-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N ԱՄ/22.2/10350-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի մանկական համալսարանական հիվանդանոց – Էլեոնորեն հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լողական սարքերի իրենց բաղադրիչներով (2 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 15,140.50 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 679 ԱՄՆ-ի դոլար, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1028 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ ԵՎ ՆԱՆՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԱԶԻՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 07/80-2/17075-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-3/17270-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 21-ի N 02/7945-14 և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N 01/06.1/12609-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող՝ 102,681,000 դրամ արժողությամբ «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**Հաստատված է**
**Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի**
**Ռեկտոր Ա.Ռ. Դարբինյանի կողմից**
**«09» ---------10---------- 2014թ.**

***«Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազայի վերազինում***

| | | |
|---|---|---|
| 1. | Ծ ր ա գ ր ի  ն պ ա տ ա կ ը | Սույն դրամաշնորհային ծրագրի հիմնական նպատակն է «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման որակի բարելավման նպատակով վերզինել ուսումնական և գիտահետազոտական լաբորատոր բազան, իրականացնել առարկայական ծրագրերերի, ուսումնական պլանների արդիականացում և դասավանդման մեթոդոլոգիայի վերանայում, մեծացնել ուսանողների ներգրավածությունը լաբորատոր և գիտահետազոտական աշխատանքներում, ուսանողներին տալ ժամանակակից, գիտատեխնիկական առաջընթացին համապատասխանող տեսական, փորձարարական և կիրառական գիտելիքներ:<br>Դրամաշնորհային ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է.<br>• ձեռք բերել ժամանակակից տեխնոլոգիական և չափիչ սարքավորումներ և վերակազմավորել ուսումնական և գիտահետազոտական լաբորատորիաները,<br>• արդիականացնել մասնագիտական առարկայական ծրագերը |

| | | |
|---|---|---|
| | | «Էլեկտրոնիկա և նանոէլեկտրոնիկա» ուղղությամբ, դրանցում ընդգրկել նոր լաբորատոր աշխատանքներ՝ համապատասխանեցնելով նոր, վերազինված լաբորատոր հնարավորություններին և գիտահետազոտական առաջընթացին:<br>Որպես արդյունք ակնկալվում է ունենալ վերազինված լաբորատոր բազա, որը հնարավորություն կտա ընդլայնել և արդիականացնել ամբիոնի և ամբիոնին կից գործող Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի (ՀՌՀ) կրիտիկական տեխնոլոգիաների կենտրոնի «Էներգիայի նոր և վերականգնվող աղբյուրների տեխնոլոգիա» խմբի կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքների գիտական թեմաները նանոէլեկտրոնիկայի և նանոտեխնոլոգիայի բնագավառում, ինչպես նաև ակնկալվում է ունենալ մշակված նոր լաբորատոր աշխատանքներ, բարձր տեխնոլոգիաների ոլորտում փորձարարական և կիրառական թեմաներ՝ ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի և ասպիրանտական ատենախոսությունների կատարման համար: |
| 2 . | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 . | Բարեգործը | Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆՄՀ)<br>Հասցե: Ս. Վրացյան 73, Երևան 0070,<br>Հեռ՝ +374 (10) 57 56 90, Հեռ/ֆաքս՝ +374 (10) 55 97 50 |
| 4 . | Ծրագրի կատարողը | ԲՄԿ ՊՈԻՀ «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»<br>ՀՀ, ք. Երևան, 0051, Հովսեփ Էմին 123, Արէքսիմբանկ ՓԲԸ, ՀՎՀՀ 00053474 |



| | | |
|---|---|---|
| 5 . | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան, ք. Երևան 0051, Հ. Էմինի 123:<br>*բնագավառը* կրթական: |
| 6 . | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է *102 681 000 ՀՀ* դրամ: |
| 7 . | Բարեգործություն ստացողը | ԲՄԿ ՊՈԻՀ «Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»-ը, ի դեմս ուսանողների, գիտաշխատողների և դասախոսների: |
| 8 . | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրի սկիզբը՝ 01 հոկտեմբեր 2014թ.<br>Ծրագրի ավարտը՝ 28 փետրվար 2015թ.: |
| 9 . | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ-ի հոկտեմբերից մինչև 2015թ.-ի փետրվարը ընկած ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.<br>1. *Ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման գնում (ներմուծում)*: Սույն թվականի օգոստոսի 15-ին Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի և Nano-Master Inc.-ի միջև կնքվել է ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման ձեռք բերման պայմանագիր: Պայմանագրի արժեքը 164 000 ԱՄՆ դոլար է, տևողությունը՝ 115 օր: Դրամաշնորհային ծրագրի բյուջեով սարքավորման ձեռք բերման համար նախատեսված է 82 341 000 ՀՀ դրամ: Գնումընախատեսվում է 2015թ-ի փետրվարին)<br>2. *Արևի ճառագայթման սիմուլյատորի գնում (ներմուծում)*: Սիմուլյատորի գնման նպատակով իրականցվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը : ԾԻԳ-ի կողմից գն անշման արդյունքների հաստատումից հետո կսկսվեն բանակցային գործընթացները: |

| | | |
|---|---|---|
| | | Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով արևի ճառագայթման ստիմուլյատորի ձեռք բերման համար նախատեսված է 6 300 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2014թ-ի նոյեմբերին)<br>3. *Ջերմային վառարանի գնում (ներմուծում)*: Ջերմային վառարանի գնման նպատակով իրականացվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը: Պայմանագրի պայմանների հստակեցման նպատակով շարունակվում են բանակցային գործընթացները: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով ջերմային վառարանի ձեռք բերման համար նախատեսված է 7 000 000 ՀՀ դրամ : (Գնումը նախատեսվում է 2014թ-ի դեկտեմբերին)<br>4. *Մագնետրոնի փոշեցրման համար անհրաժեշտ թիրախների գնում (ներմուծում)*: Թիրախների գնման նպատակով իրականացվել է միջազգային գնանշում, հայտնի է հաղթող կազմակերպության անունը: ԾԻԳ-ի կողմից գնանշման արդյունքների հաստատումից հետո կսկսվեն բանակցային գործընթացները: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով թիրախների ձեռք բերման համար նախատեսված է 2 700 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2015թ-ի փետրվարին)<br>5. *Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ գազերի գնում (ձեռքբերում)*: Գազերի գնման նպատակով իրականացվել է շուկայի ուսումնասիրություն, և պատրաստվում են գնանշման իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով գազերի ձեռք բերման համար նախատեսված է 1 400 000 ՀՀ դրամ: (Գնումը նախատեսվում է 2014թ-ի նոյեմբերին):<br>6. *Լաբորատոր ձեռնարկների և բուկլետների տպագրություն:* Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տպագրել 4 առարկաների համար արդեն մշակված լաբորատոր ձեռնակրերը և |



| | | |
|---|---|---|
| | | բուկլետներ: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով տպագրության համար նախատեսված է 870 000 ՀՀ դրամ: (Տպագրությունը նախատեսվում է 2014թ-ի դեկտեմբերին):<br>7. *Խորհրդատվական ծախսեր*՝ գիտական/ուսումնամեթոդաբանական սեմինարների կազմակերպում, ֆինանսական և հաշվապահական խորհրդատվություններ և այլն: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նշված ժամանակահատվածում խորհրդատվական ծախսերի համար նախատեսված է 1 890 000 ՀՀ դրամ: Նախատեսվում է իրականացնել մինչև 2014թ-ի դեկտեմբերը:<br>8. Կլոր սեղանի կազմակերպում: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նախատեսված է 120 000 ՀՀ դրամ: Նախատեսվում է կազմակերպել դրամաշնորհային ծրագրի ավարտին:<br>9. *Չկանխատեսված ծախսեր*՝ նախատեսված է 60 000 ՀՀ դրամ:<br><br>*Նախատեսված ընդհանուր ծախսերը 102 681 000 ՀՀ դրամ:* |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Ավտոմատ փոշեցրման մագնետրոնային սարքավորման համառոտ նկարագիրը:<br>Ավտոմատ ծրագրային կառավարմամբ մագնետրոնային փոշեցրման սարքավորումը նախատեսված է կիսահաղորդչային, դիէլեկտրիկ և մետաղական թաղանթների ստացման համար:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով սարքավորման գնման (ներմուծման) համար նախատեսված է 82 341 000 ՀՀ դրամ:<br>2. Արևի ճառագայթման սիմուլյատորի համառոտ նկարագիրը:<br>Արևի ճառագայթման սիմուլյատորը նախատեսված է արևային էլեմենտների ՕԳԳ-ի, վոլտ-ամպերային բնութագրերի և պարամետրերի չափման համար: |

| | | |
|---|---|---|
| | | Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով արևի ճառագայթման ստիմուլյատորի գնման (ներմուծման) համար նախատեսված է 6 300 000 ՀՀ դրամ:<br>3. **Ջերմային վառարանի համառոտ նկարագիրը:**<br>Բարձր ջերմաստիճանային վառարանը նախատեսված է էլեկտրոնիկայում և միկրոէլեկտրոնիկայում կիրառվող տարբեր տիպի կերամիկական և նանոկոմպոզիտային նյութերի սինթեզի և ջերմամշակման համար:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով ջերմային վառարանի գնման (ներմուծման) համար նախատեսված է 7 000 000 ՀՀ դրամ:<br>4. **Մագնետրոնի փոշեցրման համար անհրաժեշտ թիրախների բնութագիրը:**<br>Մագնետրոնի փոշեցրման . եղանակով տարբեր նյութերի թաղանթներ ստանալու համար անհրաժեշտ թիրախներ:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով թիրախների գնման (ներմուծման) համար նախատեսված է 2 700 000 ՀՀ դրամ:<br>5. **Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ գազերի նկարագիրը:**<br>Մագնետրոնի աշխատանքի համար անհրաժեշտ են գազերը՝ արգոն և ազոտ:<br>Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով գազերի գնման (ձեռք բերման) համար նախատեսված է 1 400 000 ՀՀ դրամ:<br>*6.* **Լաբորատոր ձեռնարկների և բուկլետների տպագրություն:** Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տպագրել 4 առարկաների համար արդեն մշակված լաբորատոր ձեռնակրները և բուկլետներ: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով տպագրության համար նախատեսված է 870 000 ՀՀ դրամ:<br>7. **Խորհրդատվական ծախսեր՝** գիտական/ուսումնամեթոդաբանական սեմինարների կազմակերպում, ֆինանսական և հաշվապահական խորհրդատվություններ և այլն: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նշված ժամանակահատվածում խորհրդատվական ծախսերի համար նախատեսված |



| | | |
|---|---|---|
| | | է 1 890 000 ՀՀ դրամ:<br>8. Կլոր սեղանի կազմակերպում: Դրամաշնորհային ծրագրի բյուջեյով նախատեսված է 120 000 ՀՀ դրամ:<br>9. Չկանխատեսված ծախսեր՝ նախատեսված է 60 000 ՀՀ դրամ:<br><br>*Ընդհանուր ծախսերը՝ 102 681 000 ՀՀ դրամ:* |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն,<br>Հայաստանի բարձրագույն կրթության Նորարարությունների մրցակցային հիմնադրամ (ՆՄՀ), «Կրթական ծրագրերի կենտրոն», Ծրագրերի իրականացման գրասենյակ Պետական հիմնարկ, ՀՎՀՀ 02550991<br>«Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից վերահսկվում է դրամաշնորհային ծրագրի կատարումը: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիր իրականացման ընթացքում նախատեսված է Կրթական ծրագրերի կենտրոն, ԾԻԳ-ին ներրկայացնել ընթացիկ (յուրաքանչյուր փուլի ավարտին) և վերջնական ծրագրային ու ֆինանսական հաշվետվություններ, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1029 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԻԿՕՄ-Ի ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17963-14 և հոկտեմբերի 21-ի N 06/3-3/17768-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 21-ի N 02/7958-14 և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 01/3.1/5180-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 418,373 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծման և իրականացման» ծրագիրը (կցվում է):

2. «ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

21-12/4

Հաստատված է
ԻԿՕՄ-ի Հայկական թանգարանների
ազգային կոմիտեի
գործադիր տնօրեն
Մարինե Հարոյան
23.10.2014

**«Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծման և իրականացման ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հիմնական ցուցադրության նախագծում և մոնտաժում: Ցուցադրությունը ներկայացնելու է Կոմիտաս Վարդապետի կյանքը և գործունեությունը, հետևյալ բաժիններով՝ Հանճարի ծնունդը, ուսումնառության տարիները, Կոմիտասի ստեղծագործական ժառանգությունը, Կոմիտասը և ազգային ողբերգությունը, Կոմիտասը Կոմիտասից հետո: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ Երևան, Ե. Քոչար փողոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի ՀՎՀՀ 01565354 |
| 4. | Ծրագրի կատարողը | ԻԿՕՄ-ի (ՅՈՒՆԵՍԿՕ-ին կից Թանգարանների միջազգային խորհուրդ) Հայկական թանգարանների ազգային կոմիտե ՀՀ. քաղ. Երևան, Արամի1, ՀՎՀՀ 02707455 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը,բնագավառը | ՀՀ. Երևան քաղաք, «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ, մշակույթի բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | € 418, 373 , 00 եվրոյին համարժեք դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Կոմիտասի թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ, |

| | | |
|---|---|---|
| | | ՀՀ. Երևան քաղաք, Արշակունյանց 28, ՀՎՀՀ 026300484 |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել<br>2014թ. Հոկտեմբերի 1-ից մինչև 2015 թ. հուլիսի 1-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առաջին Փուլ - Նախապատրաստական աշխատանքներ<br>- Ցուցադրության գիտական հայեցակարգի կազմում 01.10.2014 -01.12.2014 , €3.000.0 եվրոյին համարժեք դրամ<br>- Ցուցադրության գեղարվեստական հայեցակարգի կազմում 01.07.2014 -01.11.2014 € 3.000.0 եվրոյին համարժեք դրամ<br><br>-Ցուցադրության թեմատիկ պլանի մշակում և առարկայական պլանի կազմում. 01.10.-1.-15.12, 2014, €2 000.0 եվրոյին համարժեք դրամ<br><br>-Գեղարվեստական ձևավորման նախագծի կազմում, տեխնիկական գծագրերի, համակարգչային 3D մակետի ստեղծում, դետալավորում – 1.08-01.10.2014 - €30.000.00, եվրոյին համարժեք դրամ (SAT SURVEY դիզայներական ընկերություն, Իտալիա ) 01.10.2014- 01. 02.02.2015<br><br>-Բացատրագրական և այլ տեքստերի կազմում – 01.11.2014-01.12.2014 , 2.000.00 եվրոյին համարժեք դրամ<br>-Աուդիո և վիդեո նյութերի թվայնացում, մոնտաժ- 01.11.2014-01.12.2014 - € 5. 000.00 եվրոյին համարժեք դրամ<br><br>-Թանգարանային նյութերի թվայնացում՝ շուրջ 1000 միավոր. 01.10.2014-01.12. 2014 , - € 5.000.0 0 եվրոյին համարժեք դրամ<br><br>Թարգմանչական ծախսեր , բացատրական տեսքստերի, ցուցանմուշների տակագրերի և աուդեո- վիդեո տեքստերի ռուսերեն և անգլերեն թարգմանություն , 01.12.2014-01.03.2015 , € 3.000.0 0 եվրոյին համարժեք դրամ<br>-Տեքստերի սրբագրում / հայերեն ,անգլերեն, ռուսերեն/ -01.02. 2015- 01.03.2015, € 1.500.00 եվրոյին համարժեք դրամ<br><br>Երկրորդ Փուլ -Տեղեկատվական սարքավորումների ձեռք բերում<br>Տեղեկատվական սարքավորումների ՝ ձեռք բերում Երևան փոխադրում, անհատույց հանձնում Կոմիտասի թանգարանի ինստիտուտին, 01.11. 2014 - 1.12.2014 , € 98 400.00 եվրոյին համարժեք դրամ<br><br>Երրորդ փուլ- Ցուցասրահների ձևավորման աշխատանքներ<br>Լուսավորության ու տեսաձայնային համակարգերի տեղադրման և գործարքման աշխատանքներ, առաստաղի ռելսերի տեղադրում ու գործարկում՝ լուսավորության սարքերը ապահովելու համար՝ ներառյալ աքսեսուարներն ու հատուկ մասերը՝ տեղադրելու և սնելու լուսավորության սարքերի մոնտաժը, 01.11. 2014 - 1.12.2014 , € 100 992,00 եվրոյին համարժեք դրամ:<br><br>Կեղծ պատի տեղադրում, պատի երկայնքով առաջին և երկրորդ հարկերը միացնող արույրե թեքահարթակի տեղադրում՝ երաժշտական պենտագրամ հիշեցնող տեսքով:<br>Ցուցադրական կահույքի (ցուցապահարաններ, ցուցավահանակներ, ցուցասեղաններ, պատվանդաններ) և նստարանների պատրաստում և տեղադրում, 01.11. 2014 - 1.02.2015, € 125 481,00 եվրոյին համարժեք դրամ<br><br>Ցուցանմուշների տեղափոխում և ցուցափեղքերի ձևավորում, 01.02. 2015- 01.03.2015, € 8 000,00 եվրոյին համարժեք դրամ<br><br>Գրաֆիկական դիզայն՝ Բացատրարերի, տակագրերի, անոտացիոն տեքտերի, ազդագրերի, լուսանկարներների բարձրորակ տպագրություն և մոնտաժ, -01.11. 2014 - 1.02.2014, |

| | | |
|---|---|---|
| | | € 5 500, 00 եվրոյին համարժեք դրամ |
| 10. | Ձեռք բերվող( ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագրությունը | 1.20 մ տրամագծով ձայնահավաք զանգեր- ներմուծվող<br>Ձայնային վերարտադրման սարքեր և միացման լարեր<br>Էկրաններ ( Video Wall) ներմուծվող<br>Ծրագրավորված ձայնարկիչներ brightsign-ի տիպի, լարերի ու կցորդիչների հետ միասին -ներմուծվող<br>Լամպեր նախատեսված հատուկ թանգարանային լուսավորության համար D55 Venere della Fabbian Illuminazione մոդելի- ներմուծվող<br>Պրոյեկտորներ F09 Ombra della Fabbian Illuminazione մոդելի - ներմուծվող<br>Ընդամենը € 98.400 եվրոյին համարժեք դրամ , 01.10. 2014-01.12.2014 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Ծրագրի աշխատանքային խմբի վարձատրություն<br>-Ծրագրի ղեկավար համակարգում է ողջ աշխատանքը.<br>01.10.2014 -01.07.2015, € 5, 000.00 եվրոյին համարժեք դրամ<br>-Հաշվապահ 01.10.2014 -01.07.1015, € 1,000.00 եվրոյին համարժեք դրամ<br>-Ծրագրի գիտական խորհրդատու- 01.10.2014 -01.07.2015, €2,000.0. եվրոյին եվրոյին համարժեք դրամ<br>-Լուսանկարիչ 01.10. 2014- 01.02.2015, €2, 000.0 0 , եվրոյին համարժեք դրամ<br>-Ծրագրավորող -01.10. 2014- 01.02.2015, €2,000.0. եվրոյին համարժեք դրամ<br>-Իտալացի մասնագետների զործուղման ծախսեր՝ ճանապարհածախս և կեցության ծախս ՝ 10.10. 2014- 01.03.2015, €12.000.00 եվրոյին համարժեք դրամ<br>Գրասենյակային ծախսեր 01.10.2014 -01.07.1015, €1, 500.00 եվրոյին համարժեք դրամ<br>Կազմակերպական ծախսեր ընդհանուր բյուջեն կազմում է |

| | | |
|---|---|---|
| | | €25.500.00 եվրոյին համարժեք դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ մշակույթի նախարարության և «Փյունիկ» հիմնադրամի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային ամփոփ հաշվետվությունների) |

Ներկայացրեց զործադիր տնօրեն՝ Մարինե Հարոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1030-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17221-14 և հոկտեմբերի 16-ի N 06/3-2/17376-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N ԱՄ/22.2/10632-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Ameri Cares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (մեկ տեղ, 21 կգ ընդհանուր քաշով, 636.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 91.20 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1031-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17214-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-2/17351-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 1/06/1030-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված ապրանքները (16 տեղ, 6,022.95 կգ ընդհանուր քաշով, 17,390 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1032-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17222-14 և հոկտեմբերի 16-ի N 06/3-2/17377-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 1/06/1031-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի (FIFA) կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով կանանց ազգային հավաքականի համար ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (7 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 3,433.50 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1033-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17224-14 և հոկտեմբերի 15-ի N 06/5-1/17277-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 1/06/1032-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հանդբոլի եվրոպական ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հատակի ծածկույթը (7 տեղ, 5,600 կգ ընդհանուր քաշով, 14,000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1034-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 07/80-2/17073-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-2/17261-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված օդափոխության համակարգի օդի հոսքի կարգավորման էլեկտրական սարքերի (4 տեղ, 2,168 կգ ընդհանուր քաշով, 23,100.42 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,200 եվրո, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա և հուլիսի 18-ի N Մ-680-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1035-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N 07/80-2/17353-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-2/17251-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված էլեկտրական հոսանքի մալուխները (10 տեղ, 2,380 կգ ընդհանուր քաշով, 14,284.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 1,650 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա և հուլիսի 18-ի N Մ-680-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1036-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-217215/-14 և հոկտեմբերի 16-ի N 06/3-3/17374-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա և հուլիսի 18-ի N Մ-680-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մանանա Գրեյն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04102865) 2014 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված N SA 2014-1010 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բազալտե սալիկների մատակարարումը 9,748,260 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ            Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1037-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/16546-14 և հոկտեմբերի 9-ի N 06/3-3/16785-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արդի Կարասի » ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2014 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 515,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Նուշիկյան ասոցիացիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01510288) 2014 թվականի սեպտեմբերի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 161,760 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1038-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 07/80-2/17575-14 և հոկտեմբերի 20-ի N 06/3-3/17718-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ուկրաինայի քաղաքացի Ռոման Շուպլովի հետ (անձնագիր՝ EC 553902, փաստացի բնակության հասցեն՝ քաղ. Երևան, Թումանյան 31, բն. 45) 2014 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված N 01-29.09.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագավորման ծառայությունների մատուցում՝ 2,272,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ԱՄՆ-ի քաղաքացի Գարի Ռոբերտ Շվարցի հետ (անձնագիր՝ 454064876, փաստացի բնակության հասցեն՝ քաղ. Երևան, Քոչարի 13, բն. 45) 2014 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N 01-01.10.14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անիմացիոն դասընթացների անցկացում՝ 662,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1039-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱ-ՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/17414-14 և հոկտեմբերի 20-ի N 06/3-2/17629-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-860-Ա և 2014 մայիսի 16-ի N Մ-380-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «2014թ. հոկտեմբեր» բառերը փոխարինել «2015թ. մայիս» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1040-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1032-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17221-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-3/17269-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-1032-Ա որոշման (2013 թվականի հունիսի 7-ի N Մ-399-Ա, հոկտեմբերի 4-ի N Մ-862-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1234-Ա և 2014 թվականի մարտի 14-ի N Մ-182-Ա) 1-ին կետի 2-րդ ենթակետում «3,656,900 դրամի չափով» բառերը փոխարինել «24,841,948 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1041-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱՐԱՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17216-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-3/17271-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 02/7705-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ 76,893,500 դրամ ընդհանուր արժեքով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կետ Արքիթեքթ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00253052) 2014 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N 141001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնի հայեցակարգային և ճարտարապետական գծագրերի ու հաշվարկների պատրաստում՝ 5,881,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
պաշտոնակատար Օհաննես Եորդեկյանի կողմից

«22» հոկտեմբերի, 2014թ.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում» ծրագիր

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է ՀՀ-ում իրականացվող Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն ծրագրի տարբերակով ԼՂՀ ք.Ստեփանակերտում ստեղծել և իրականացնել ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն, որն էլ իր հերթին նպատակ ունի<br>• աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները մասնագիտական ուղղություններով,<br>• խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանըՀետագա տարիների ընթացքում նախատեսվում է նաև այդ կենտրոնի գործունեությանն ուղղված ֆինանսական աջակցություն: | |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: | |
| 3. | Բարեգործը | Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (հասցե՝ 55 East, 59th Street, New York, NY 10022, ԱՄՆ): | |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): | |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, կրթության բնագավառ: | |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կենտրոնի ստեղծման՝ ներառյալ կահավորման և սարքավորումներով վերազինման բյուջեն, կազմում է 76,893,500 դրամ: | |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• կրտսեր խմբի 12-18 տարեկան ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը կլինի անվճար հիմունքներով, բաց կլինի բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը անց է կացվելու | |

1

2

| | | | |
|---|---|---|---|
| | | հեռահաղորդության միջոցով, որը թույլ կտա տարվա ընթացքում անդամագրել հարյուրավոր երիտասարդներ, այն կգործի արտադասարանային ակումբների ոճով, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: | |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Կենտրոնի ստեղծման ծրագիրը նախատեսվում է սկսել 2014 թվականի հոկտեմբերի 1-ին և ավարտել 2015 թվականի մարտի 30-ին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ԼՂՀ կառավարության հետ համաձայնեցված միջոցառումների շրջականում նախատեսվում է<br>-Ձեռք բերել կենտրոնի հայեցակարգային և ճարտարապետական գծագրերը, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 5,881,500 դրամ,<br>-Կենտրոնի համար ձեռք բերել կահավորանք, ներկրել համակարգիչներ, սարքավորումներ, ներկրել համակարգչային ծրագրեր և իրականացնել կենտրոնի անձնակազմի նախնական վերապատրաստում, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 71,012,000 դրամ:<br>Կենտրոնի վերանորոգման աշխատանքները իրականացնելու է ԼՂՀ կառավարությունը: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Հայեցակարգային և ճարտարապետական գծագրերի ձեռքբերում | 5,881,500 դրամ |
| | | Կահավորանքի ձեռքբերում | 17,220,000 դրամ |
| | | Համակարգչային սարքավորումների, սերվերների, էկրանների, խաղային համակարգերի, վիդեո և աուդիո սարքավորումների և համանման այլ ապրանքների ներկրում | 44,854,000 դրամ |
| | | Անվտանգության համակարգերի ներկրում | 1,230,000 դրամ |
| | | Լիցենզավորված ծրագրերի ձեռքբերում | 6,888,000 դրամ |
| | | Անձնակազմի վերապատրաստում | 820,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ԼՂՀ կառավարություն, «Սիմոնյան կրթական հիմնադրամ» | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |

Կազմեց Լենա Բաղդասարյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի տեղակալ ֆինանսական գծով
51-22-50, 51-22-51

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1042-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17846-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/18044-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

ֆրանսիական «TVPaint Developpment» ընկերության հետ 2014 թվականի հոկտեմբերի 3-ի նախնական հաշիվ ապրանքագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անիմացիոն ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 1,530 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1043-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 21-ի N 07/80-2/17753-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/18043-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՌԵԴ-ՖՈՒՆԹ » ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2014 թվականի հոկտեմբերի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 120,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2014 թվականի հոկտեմբերի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ապրանքների մատակարարում՝ 135,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1044 - Ա**
**քաղ. Երևան**

## «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 07/80-2/18089-14 և հոկտեմբերի 25-ի N 06/3-3/18291-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 02/7909-14 և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 01/3.1/5077-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 52,110 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ «Մշակութային քաղաքներ՝ կամավորների ուժերով» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված ավտոմեքենան («KIA SORENTO» մակնիշի 2011 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 5XYKT3A14BG024081, 7,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, ԱՄ ՄՁՄ ՄՏ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Երիտասարդական ակումբների դաշնություն» երիտասարդական հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանարպետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի ու Արագածոտնի մարզպետներին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

"Երիտասարդական ակումբների դաշնություն"

երիտասարդական հասարակական կազմակերպության

նախագահության կողմից

08 հոկտեմբերի 2014թ

## "ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐ՝ ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒԺԵՐՈՎ" ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի ու Վայոց ձորի մարզերում պատանիների ու երիտասարդների ազատ ժամանցը արդյունավետ կազմակերպելու համար երիտասարդական ակումբների ու խմբակների ստեղծում ու դրանց գործունեության ապահովում: Ծրագրի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվելու այդ բնակավայրերում գործող երիտասարդական ակումբներին, կենտրոններին ու խմբակներին, արտասահմանցի ու տեղացի երիտասարդ կամավորների ուժերով կազմակերպվելու են բազմաբնույթ ուսուցողական ծրագրեր, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի պարտադիր այլ վճարների գծով արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Եվրամիություն, Կրթության և մշակույթի գործակալություն, UNIT P6, Avenue du Bourget 1, Brussels 1140, Բելգիա; էլ.փոստ՝ eacea-p6@ec.europa.eu |
| 4 | Ծրագիրը կատարողը | "Երիտասարդական ակումբների դաշնություն" երիտ. ՀԿ, [illegible] պող. 4-1/1, Երևան 0015, ՀՎՀՀ 03308579 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | [illegible]ի, Վայոց ձորի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Կոտայքի ու Արագածոտնի [illegible]<br>[illegible]ակութային |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն 52110 եվրոյին համարժեք ՀՀ դրամ է: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացողները Հայաստանի մարզերում գործող երիտասարդական ակումբները, կենտրոններն ու խմբակներն են: Նրանց ընտրության համար ծրագրի աշխատակազմը այցելելու է մարզային բնակավայրեր, ուսումնասիրելու է գործող ակումբների ու խմբակների կարիքները: Ընտրության ժամանակ դրանք հաշվի են առնվելու ծրագրի աշխատակազմի կողմից: Հայաստանի մարզերից ընտրվելու է 20 երիտասարդական ակումբ կամ կենտրոն: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 2014 փետրվարի 1, 2015թ փետրվարի 1 |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, ծավալները և նախատեսվող գինը | - Ծրագրի նախապատրաստական աշխատանքներ, աշխատակազմի ձևավորում, պայմանավորվածությունների ձեռքբերում մարզերում գործող ՀԿ-երի, երիտասարդական կենտրոնների, ակումբների ու խմբակների հետ – 2014թ փետրվար-ապրիլ ամիսներ – 2.000.000 (երկու միլիոն) դրամ հաղորդակցություն, այցելություններ, հանդիպումներ ու հյուրասիրության կազմակերպում, աշխատակազմի վարձատրություն,<br>- Հայաստանից ու եվրոպական երկրներից երիտասարդ կամավորների դիմումների ընդունում ու ընտրություն, հրավերներ ու ճանապարհածախս - 2014թ մայիս-հունիս ամիսներ - 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ ավիատոմսերի ձեռքբերում, աշխատակազմի վարձատրություն, կամավորների սնունդ և գիշերակաց,<br>- Կամավորների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում – 2014թ հուլիս – սեպտեմբեր ամիսներ – 5.500.000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ հյուրանոցային ծախսեր, մասնակիցների և դասընթացավարների գիշերակաց և սնունդ, գրենական պիտույքների ու ուսուցողական նյութերի ձեռքբերում,<br>- Մարզային երիտասարդական ակումբների, կենտրոնների ու խմբակների կարիքների գնահատում, նրանց համար նյութերի ձեռքբերում – 2014թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ – 10.000.000 (տասը միլիոն) դրամ, 20 երիտասարդական կենտրոնի համար մոտավորապես 500.000-ական դրամի սահմաններում,<br>- Տրանսպորտային միջոցի ձեռքբերում նյութերի՝ Երևանից մարզեր տեղափոխման, աշխատակազմի ու կամավորների այցելությունների կազմակերպման համար – 2014թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներ – 4.000.000 (չորս միլիոն) դրամ՝ ներառյալ տրանսպորտային միջոցի ձեռքբերում, տեղափոխում, ներմուծում ու այլ |

| | | |
|---|---|---|
| | | անհրաժեշտ ծախսեր:<br>- Տեղական միջոցառումների, ձեռքերված ու մարզային երիտասարդական խմբակներին փոխանցված նյութերով ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, աշխատակազմի վարձատրություն – 2014թ դեկտեմբեր – 2015թ հունվար ամիսներ – 3.000.000 (երեք միլիոն) դրամ: |
| 10 | Ձեռք բերվող /ներմուծվող/ ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հաղորդակցություն ծրագրի շրջանակներում, այցելություններ, հանդիպումներ մարզերում ու հյուրասիրության կազմակերպում - 2.000.000 (երկու միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում</u>,<br>- Կամավորների ավիատոմսերի ձեռքբերում, նրանց սնունդ և գիշերակաց - 2.500.000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում</u>,<br>- Կազմակերպությունների ներկայացուցիչների համար ուսուցողական դասընթացների կազմակերպում, հյուրանոցային ծախսեր, մասնակիցների և դասընթացավարների գիշերակաց և սնունդ, գրենական պիտույքների ու ուսուցողական նյութերի ձեռքբերում, 5.500.000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում</u>,<br>- 20 երիտասարդական կենտրոնի համար նյութերի ձեռքբերում - 10.000.000 (տասը միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում</u>,<br>- Տրանսպորտային միջոցի ձեռքբերում և ներմուծում՝ ներառյալ տեղափոխման ու այլ անհրաժեշտ ծախսերը – 7000 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:<br>Տրանսպորտային միջոցի տվյալներն են՝<br>Տարի – 2011<br>Մակնիշ – KIA SORENTO, 2,4L<br>Գույն – BURGUNDY<br>VIN համար – 5XYKT3A14BG024081<br><u>Գործարքի շրջանակներում ակնկալվում է մաքսատուրքից, այլ հարկերից ու պարտադիր վճարներից ազատում</u>:<br>- Տրանսպորտային միջոցի վերանորոգում ծառայություն – 1130000 (մեկ միլիոն հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:<br><u>Գործարքի շրջանակներում ակնկալվում է Ավելացված արժեքի հարկից ազատում</u>:<br>- Տեղական միջոցառումների, ձեռքի աշխատանքների ցուցահանդեսների կազմակերպում, աշխատակազմի վարձատրություն – 3.000.000 (երեք միլիոն) դրամ – <u>հարկային արտոնություն չի ակնկալվում</u>: |

| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը՝ աշխատակազմի վարձատրությունը և գրասենյակի կոմունալ ծախսերը կազմում են ամբողջ բյուջեի 5%-ը՝ 1.350.000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններիմ այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցել մարզերում գործող երիտասարդական կազմակերպությունների, իրավաբանական անձ չհանդիսացող ակումբների ու կենտրոնների հետ:<br>Մասնավորապես, “Սոցիալական ու երիտասարդական աշխատողներ” ՀԿ, “Երիտասարդական հանրապետություն” ՀԿ, “Կրթական ու մշակութային կամուրջներ” ՀԿ, “Հայկական Փի Ար ասոցիացիա” գիտատեղեկատվական ՀԿ, “Եղվարդ” բնապահպանական ՀԿ, “Համաշխարհային հայկական երիտասարդական ոստայն” միջազգային ՀԿ, “Սպիտակ” երիտասարդական ակումբ, “Քոլսոն” ՀԿ, “Աշտարակի երիտասարդական կենտրոն”, “Երիտասարդական ալիք” ՀԿ, Շիրակի թեմի երիտասարդական սոցիալ-մշակութային կենտրոն, “Սևան” երիտասարդական ակումբ, Գյումրիի “Բարեկամություն” ՀԿ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացման համար ստեղծվելու է համատեղ հանձնախումբ, որում նախատեսվում է ընդգրկել իրականացնող և գործընկեր կազմակերպությունների մեկական ներկայացուցիչ:<br>Ծրագրի ավարտի մասին սահմանված կարգով ներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1045 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/17461-14 և N 06/3-2/17403-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 15-ի N ԱՄ/22.2/10744-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նառիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (դեղ, մեկանգամյա օգտագործման ներարկիչներ ու ասեղներ, 2 տեղ, 81 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը, մեկանգամյա օգտագործման ներարկիչներն ու ասեղները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1046 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԵՍՏՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 07/80-2/17576-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-2/18021-14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N ԱՄ/22.2/10902-14 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ անհատ բարերար Ֆրիդա Ջորդանի կողմից աջակցության նպատակով «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (լաբորատոր պլաստմասե պարագաներ, 1 տեղ, 11.5 կգ ընդհանուր քաշով, 10,487.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 169 ԱՄՆ-ի դոլար, ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1047-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N AC-239-14 և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/17415-14 ու հոկտեմբերի 17-ի N 06/3-3/17497-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության
Գործադիր Տնօրեն՝ Գագիկ Տարասյանի կողմից
«13» հոկտեմբերի, 2014թ.

**«Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի եւ տեղեկատվության կենտրոնի կառուցում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Կառուցել հաշմանդամների համար նախատեսված կենտրոն, որը կունենա բոլոր անհրաժեշտ պայմանները նպաստելու բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների ինտեգրացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով ստանալ Ավելացված Արժեքի Հարկից և մաքսային տուրքերից ազատման արտոնություն |
| 3. | Բարեգործը | Կարիտաս Ավստրիա՝ Wichnergasse 22, A-6800 Feldkirch, Austria |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ավստրիական Կարիտաս համագործակցությամբ «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի (Գյումրի, Հ.Սարգսյան 3 նրբ., 8 տուն, ՀՎՀՀ՝ 05514397), ինչպես նաեւ ավստրիական և հայկական շինարարական կազմակերպությունների: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Պ.Սևակ 23<br>բնագավառը՝ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ողջ կառուցապատման համար նախատեսված է 1,605,200,000 ՀՀ դրամ գումար, որից առաջին տարվա համար՝ հուլիս-դեկտեմբեր 2012՝ 55,000,000 ՀՀ դրամ, երկրորդ, 2013, տարվա համար՝ 140 640 000 ՀՀ դրամ, երրորդ՝ 2014, տարվա համար՝ 1 094 560 000 ՀՀ դրամ, իսկ մնացած գումարը՝ 315.000.000 ՀՀ դրամը 2015-ի հունվար-դեկտեմբեր ամիսների համար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայկական Կարիտաս» ԲՀԿ «Բազմակի հաշմանդամությամբ երեխաների ցերեկային խնամքի կենտրոն» ծրագրում ներգրավված 100 բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաներ/երիտասարդներ և նրանց ընտանիքների 400 անդամներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | հուլիս 2012- 20 դեկտեմբեր 2015թթ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի նպատակն է կառուցել հաշմանդամ անձանց համար խնամքի եւ տեղեկատվության կենտրոն, որը կպատկանի Հայկական Կարիտասին եւ կօգտագործվի հաշմանդամություն ունեցող անձանց եւ նրանց ընտանիքներին տեղեկատվություն եւ առօրյա խնամք ապահովելու համար: Շենքի շահագործման ծրագիրը կուղարկվի բարեգործական հանձնաժողովի հաստատմանը շենքի կառուցման աշխատանքների ավարտից հետո:<br>Նախատեսվում է կառուցապատել 2.55 հա տարածք, որն ամբողջությամբ տրամադրվելու է հաշմանդամ երեխաներին, նրանց կարիքներին, վերականգնողական գործընթացներին և շրջակա միջավայրի հետ հաղորդակցության բարելավմանը:<br>Ծրագրի իրականացման համար նախատեսված գումարը կազմում է 1,605,200,000 ՀՀ դրամ, որը պետք է ծախսվի վերը նշված չորս փուլերի ընթացքում:<br>**Առաջի փուլ – 2012թ.**<br>Կառուցապատման առաջին փուլում նախատեսվում է կազմակերպել վերականգնողական կենտրոնի շենքի շահագործման համար անհրաժեշտ աշխատանքները, որոնք կներառեն ճարտարապետական աշխատանքները, ինժեներական հաշվարկներ, հատակագծերի հաստատումներ, կոնսենկացիաների թույլտվություններ, հողային աշխատաքներ:<br>Առաջին փուլի համար նախատեսված գումարը կազմում է 55,000,000 ՀՀ դրամ (49 000 000 ՀՀ |

| | | |
|---|---|---|
| 10 | | դրամ ուղղակի եւ 6 000 000 ՀՀ դրամ վարչական եւ վերահսկողության ծախսեր):<br>**Երկրորդ փուլ - 2013թ.**<br>Կառույցի հետագա շահագործման համար նախատեսվող կառույցների և օբյեկտների նախագծային և շինարարական աշխատանքներ: Տեխնիկական համակարգերի կառուցում: Կառուցապատման համար անհրաժեշտ ապրանքների ներմուծում:<br>Երկրորդ փուլի համար նախատեսնված ընդհանուր գումարը կազմում է 140 640 000 ՀՀ դրամ (131 608 000 ՀՀ դրամ ուղղակի եւ 9 032 000 ՀՀ դրամ վարչական եւ վերահսկողության ծախսեր), որից 59 447 000 ՀՀ դրամը՝ ներմուծում:<br><br>**Երրորդ փուլ - 2014թ.**<br>Կառուցապատման համար անհրաժեշտ ապրանքների և համակարգերի ներմուծում: Ներքին եւ արտաքին հարդարման աշխատանքներ և կահավորում մասնակի:<br>Երրորդ փուլի համար նախատեսնված գումարը կազմում է 1 094 560 000 ՀՀ դրամ (1 048 392 000 ՀՀ դրամ ուղղակի եւ 46 168 000 ՀՀ դրամ վարչական եւ վերահսկողության ծախսեր), որից 891 398 000 ՀՀ դրամը՝ ներմուծում:<br><br>**Չորրորդ փուլ - 2015թ.**<br>Կառուցապատման համար անհրաժեշտ ապրանքների և համակարգերի, ներքին և արտաքին հարդարման և ամբողջական կահավորման բեռների ներմուծում: Այգիների, բանջարաբոստանային կուլտուրաների և նմանատիպ գոտիների կազմակերպում, տարածքի ցանկապատում: Կենդանիներով թերապիայի, արհեստագործական կենտրոնների, խաղահրապարակների կառուցում, կանաչապատում՝ համապատասխան մասնագետների և անհրաժեշտ ռեսուրսների գնման և ներառմամբ:<br>Չորրորդ փուլի համար նախատեսնված գումարը կազմում է 315 000 000 ՀՀ դրամ (299 425 000 ՀՀ դրամ ուղղակի եւ 15 575 000 ՀՀ դրամ վարչական եւ վերահսկողության ծախսեր), որից 265 000 000 ՀՀ դրամը՝ ներմուծում:<br><br>Շին կապալի պայմանագիրը կնքվելու է մի քանի փուլերով, քանի որ կառույցը ոչ տիպային է և աշխատանքները իրականացվելու են Ավստրիական կողմի հետ համատեղ՝ համապատասխան մասնագետների ներգրավմամբ և ժամանակակից նյութերի օգտագործմամբ: Տարածքը եւ կառույցը լինելու են բնապահպանական: Առաջին փուլի շինարարական աշխատանքներն իրականցրել է «Ախուրյան ԿՈՈՊՇԻՆ» ՍՊԸ (ք. Գյումրի Թբիլիսյան խճ. 1, ՀՎՀՀ 05801184):<br>Երկրորդ և երրորդ փուլերի շինարարական աշխատանքներն իրականացրել է «Կանակա» ԲԲԸ (ք.Վանաձոր, Գ.Նժդեհ 4, ՀՎՀՀ՝ 06901369), իսկ հորատման աշխատանքներն՝ «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ (ք.Եղվարդ, Երկաթգծի կայարան 11, ՀՎՀՀ՝ 03300963 ):<br>Առաջին փուլի տեխնիկական և հեղինակային հսկողությունն իրականացրել է «ԵՐԱՆԳ» ՍՊԸ-ն (ք. Գյումրի Իսահակյան փ.3-53, ՀՎՀՀ 05507067):<br>Երկրորդ և երրորդ փուլերի տեխնիկական վերահսկողությունը իրականացրել է Ա/Ձ Մ.Մելքոնյանը (ք.Գյումրի, Երևանյան խճ. 5 շ., բն. 75, ՀՎՀՀ՝ 52173748), իսկ հեղինակային վերահսկողությունը՝ «Մ.Ա.Փ.-Դիզայն» ՍՊԸ (ք.Երևան, Այգեստան 9 փող, 31ա, ՀՎՀՀ՝ 01542832):<br>Տեխնիկական և հեղինակային վերահսկողություն, վարչական ծախսեր, անկանխատեսելի ծախսեր – 76 743 000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 10 | Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ապրանքների ձեռք բերում և ներմուծում՝<br>• Հողային և բետոնացման աշխատանքներ (ներառյալ ճարտարապետական և շինարարական աշխատանքները)՝ 460,800,000 ՀՀ դրամ, որից կառույցի կառուցվածքային բլոկերի ներմուծում – 244,000,000, իսկ հողային և բետոնացման աշխատանքներ – 216,800,000 ՀՀ դրամ<br>• Տեխնիկական համակարգերի ներմուծում՝ 406,000,000 ՀՀ դրամ,<br>• Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ՝ 383,840,000 ՀՀ դրամ, որից արտաքին հարդարման աշխատանքներ – 100,000,000 ՀՀ դրամ, իսկ ներքին և արտաքին հարդարման համար անհրաժեշտ շինանյութերի և ապրանքների ներմուծում – 283,840,000 ՀՀ դրամ<br>• Օժանդակ կառույցներ և կանաչապատում՝ 283,360,000 ՀՀ դրամ<br>• Տեխնիկական եւ հեղինակային վերահսկողություն՝ 30,480,000 ՀՀ դրամ:<br><br>Առաջին փուլի շինարարական աշխատանքներն իրականցրել է «Ախուրյան ԿՈՈՊՇԻՆ» ՍՊԸ: Աշխատանքների արժեքն առանց ԱԱՀ կազմում է 4.200.120 ՀՀ դրամ:<br>Երկրորդ և երրորդ փուլերի շինարարական աշխատանքներն իրականացրել է «Կանակա» ԲԲԸ: Աշխատանքների արժեքը կազմում է 188,921,872 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: Հորատման աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 10.800.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ և իրականացվել է «Աշոկ շինարարական ֆիրմա» ՍՊԸ-ի կողմից:<br>Տեխնիկական վերահսկողության համար Ա/Ձ Մ.Մելքոնյանին վճարվել է 1.962.940 ՀՀ դրամ առանց ԱԱՀ, իսկ հեղինակային վերահսկողության համար՝ «Մ.Ա.Փ.-Դիզայն» ՍՊԸ-ին 603.980 ՀՀ դրամ առանց ԱԱՀ: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպական ծախսերը կազմում են 40,720,000 ՀՀ դրամ, որի համար չի նախատեսվում ԱԱՀ-ից ազատում<br>1. Գրասենյակային ծախսեր՝ 19,080,000 ՀՀ դրամ<br>2. Աշխատավարձ՝ 10,180,000 ՀՀ դրամ<br>3. Անուղղակի ծախսեր՝ 11,460,000 ՀՀ դրամ |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Անմիջական համագործակցություն կիրականացվի ՀՀ Աշխատանքի եվ Սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի, ինչպես նաև շինարարական կազմակերպությունների հետ : |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացնի Հայկական Կարիտաս ԲՀԿ Վարչական Խորհուրդը:<br>Առաջին փուլի տեխնիկական և հեղինակային վերահսկողությունը իրականացնելու է «ԵՐԱՆԳ» ՍՊԸ-ն (ք. Գյումրի Իսահակյան փ.3-53, ՀՎՀՀ 05507067):<br>Երկրորդ և երրորդ փուլերի տեխնիկական վերահսկողությունը կիրականացնի Ա/Ձ Մ.Մելքոնյանը (ք.Գյումրի, Երևանյան խճ. 5 շ., բն. 75, ՀՎՀՀ՝ 52173748), իսկ հեղինակային վերահսկողությունը՝ «Մ.Ա.Փ.-Դիզայն» ՍՊԸ (ք.Երևան, Այգեստան 9 փող, 31ա, ՀՎՀՀ՝ 01542832):<br>Ծրագրի ավարտին հաշվետվություն կներկայացվի Բարեգործական Ծրագրերի Համակարգման Հանձնաժողովին և Ավստրիական Կարիտասին: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբեր 2014 թվականի N Մ- 1048 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԴԱՐԱԿԱՇԱՐԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N 07/80-2/16316-14 և հոկտեմբերի 3-ի N 06/3-3/16305-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 02/7369-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3,276,000 դրամ արժողությամբ «Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի դարակաշարերի նորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ՝ 04703401) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01801249) 2014 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված N 15Ա/014 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի շարժական դարակաշարերի կառուցվածքային թերությունների վերացում ՝ 3,276,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Սևանի քաղաքապետին:

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

12/4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի

Վարչատնտեսական բաժնի տնօրեն

Մուշեղ եպիսկոպոս Բաբայան

«26» ______________ 2014 թ.

## Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի դարանկաշարերի նորոգում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի շարժական դարակաշարերի կառուցվածքային թերությունների վերացումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3,276,000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 22 օգոստոս 2014թ. – 10 հոկտեմբեր 2014թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի շարժական դարակաշարերի կառուցվածքային թերությունների վերացում՝ 3,276,000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի կողմից (ՀՎՀՀ 01801249, ՀՀ, Ք. Երևան, Րաֆֆու 111)՝ պայմանագիր կնքված 22.09.2014թ.:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 22 օգոստոս 2014թ. – 10 հոկտեմբեր 2014թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի գրադարանի շարժական դարակաշարերի կառուցվածքային թերությունների վերացում՝ 3,276,000 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Սևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1049 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17979-14 7 հոկտեմբերի 20-ի N 06/5-1/17702-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից, Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված բեռի՝ պարաֆինի (800 տեղ, 18,750 կգ ընդհանուր քաշով, 32,663 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը: Բեռն նախատեսված է ծիսական մոմի արտադրության համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1050 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍԱՏԱՐ» ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 7-ի N ՖԲ/ԱնՄ-4/8049-14 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.*** 

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլտ Լեյկ Սիթիից Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի եկեղեցու միջոցներով, «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բեռի (15 հատ RR տեսակի հաշմանդամություն ունեցողների համար նախատեսված սայլակներ՝ 305 կգ ընդհանուր քաշով, 4,020.00 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը: Բեռը նախատեսված է «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության շահառուների և Հայաստանի Հանրապետությունում ապրող՝ նման պարագաների կարիքն ունեցող հաշմանդամների համար:

2. «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1051 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-934-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17852-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/18041-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 22-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սիրիահայ երեխաների կայուն զարգացումը Հայաստանում» ծրագրի մասին N Մ-934-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անտարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2014 թվականի հոկտեմբերի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 100 հատ գրքի տպագրություն՝ A4 չափի, երկկողմ գունավոր և մեկ հատ A4 չափի գրքի էջադրման աշխատանք՝ 200 էջի սահմաններում՝ 860,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1052 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N Մ-308-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/16545-14 և հոկտեմբերի 13-ի N 06/3-3/17042-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի ապրիլի 26-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի մասին N Մ-308-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անի Պլազա Հոթել» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01505315) 2014 թվականի սեպտեմբերի 12-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրի շրջանակներում կազմակերպել երկօրյա դասընթաց՝ 651.000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1053 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 07/80-2/17574-14 և հոկտեմբերի 20-ի N 06/3-3/17710-14 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքեր Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2014 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընդմիջման ապահովում՝ 140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1054 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-522-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 17-ի N 07/80-2/17577-14 և հոկտեմբերի 21-ի N 06/3-3/17770-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» N Մ-522-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ագաթա Ֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01828355) 2014 թվականի սեպտեմբերի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագրի շահառուներին դեղորայքի տրամադրում՝ 1,555,992 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1055 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N Մ-522-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 07/80-2/17975-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/18020-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 6-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Աջակցություն սիրիահայերին և նրանց կարողությունների հզորացում» N Մ-522-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կոպացիո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02585487) 2014 թվականի հոկտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծրագրի շահառուներին դեղորայքի տրամադրում՝ 175,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1056 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-936-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբեր 15-ի N 07/80-2/17341-14 և հոկտեմբեր 17-ի N 06/3-3/17499-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստան» մարզական հասարակական սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորոգում» ծրագրի մասին» N Մ-936-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին, 2-րդ և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «8,784,534 դրամ» բառերը փոխարինել «9,952,463» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «5,000,000 դրամ» բառերը փոխարինել «5,700,000» բառերով.

3) որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերում «սեպտեմբերի 30» բառերը փոխարինել «նոյեմբերի 10» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1057 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԽՈՒՔԻ ԾԱՆՐ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎ 8 ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ-ՈՒՄ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԱՍԱՍԵՆՅԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N 07/80-2/16317-14 և հոկտեմբերի 8-ի N 06/3-3/16671-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 02/7368-14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվակա-նի հոկտեմբերի 8-ի N ՖԲ/ԱնՄ-4/8052-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

| | | 1. Հայկական խոհանոցի վերածննդի հետ կապված ծախսեր | ***140,000,000*** | 2014-2020 |
| | | *հետազոտական և վերլուծական աշխատանքներ* | *18,000,000* | |
| | | *խորհրդատվական ծառայության ծախսեր* | *42,400,000* | |
| | | *լուսաբանման, հանրության հետ կապված ծախսեր* | *33,600,000* | |
| | | *մասնագետների փոխանակման, հյուրանոցային և այլ ծախսեր* | *10,800,000* | |
| | | *նյութերի պատրաստման, թարգմանության, տպագրման հետ կապված ծախսեր* | *12,600,000* | |
| | | *սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ* | *22,600,000* | |
| | | 2. Գյուղական իջևանատների ստեղծման գործընթացի հետ կապված ծախսեր | ***32,000,000*** | 2014-2020 |
| | | *հետազոտական և վերլուծական աշխատանքներ* | *6,000,000* | |
| | | *խորհրդատվական ծառայության ծախսեր* | *4,000,000* | |
| | | *լուսաբանման, հանրության հետ կապված ծախսեր* | *10,000,000* | |
| | | *նյութերի պատրաստման, թարգմանության, տպագրման հետ կապված ծախսեր* | *6,000,000* | |
| | | *սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ* | *6,000,000* | |
| | | 3. Տաթևի թանգարանի ստեղծման աշխատանքներ | ***145,000,000*** | 2014-2020 |
| | | *խորհրդատվական ծառայության ծախսեր* | *14,400,000* | |
| | | *լուսաբանման, հանրության հետ կապված ծախսեր* | *22,800,000* | |
| | | *ներքին հարդարանքների ծախսեր* | *65,800,000* | |
| | | *սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ* | *22,800,000* | |
| | | *նյութերի պատրաստման, թարգմանության, տպագրման հետ կապված ծախսեր* | *19,200,000* | |
| | | 4. Հայաստանի հարավային շրջաններում էկոզբոսաշրջության զարգացում | ***71,000,000*** | 2014-2020 |
| | | *հետազոտական և վերլուծական աշխատանքներ* | *11,000,000* | |
| | | *լուսաբանման, մոնիտորինգի հետ կապված ծախսեր* | *6,000,000* | |
| | | *հետիոտն, հեծանվային ճանապարհների պատրաստում, բարեկարգում, ցուցանակների տեղադրում* | *46,800,000* | |
| | | *սեմինարների, միջոցառումների կազմակերպման աշխատանքներ* | *7,200,000* | |
| | | 5. Տաթևի Վերածնունդ ծրագրին նվիրված միջոցառումներ | ***500,000,000*** | 2014-2020 |
| | | *Միջոցառումների կազմակերպման վճար* | *100,000,000* | |
| | | *Տեխնիկայի ապահովում* | *50,000,000* | |
| | | *Համերգային մաս* | *150,000,000* | |
| | | *Ֆուրշետների կազմակերպում* | *150,000,000* | |
| | | *Տարացքների, գույքի վարձակալություն* | *50,000,000* | |
| | | Ընդամենը | **4,557,000,000** | |

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման, ապրանքների մատակարարման, գույքի վարձակալության, ապրանքների առուվաճառքի պայմանագրերի շրջանակներում Տաթևի վանական համալիրի վերականգնման, ինչպես նաև Տաթևի վանքի և Տաթևի վանքի հարակից բնակավայրերի մշակութային զարգացման համար ձեռք բերվող ապրանքներ, ծառայություններ և աշխատանքներ՝ **1,000,000,000 ՀՀ** դրամ՝ մասնավորապես՝<br>*1. Ռուսական արտադրության TEFOND DREIN PLUS թաղանթ 20,000,000 ՀՀ դրամ*<br>*2. WANIN ПВХ դրենաժային խողովակ տրամագիծը՝ 200մմ, ֆիլտրը՝ գեոտեքստիլից 10,000,000 ՀՀ դրամ*<br>*3. Պարսկական արտադրության կրաշաղախ – 10,000,000 ՀՀ դրամ*<br>*4. Եվրոպական լույսեր – 60,000,000 ՀՀ դրամ*<br>*5. Այլ ծառայությունների և ապրանքների համար նախատեսված գումար - 900,000,000 ՀՀ դրամ* |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | **1,000,000,000 ՀՀ դրամ** դրամ - գրասենյակային ծախսերը, աշխատակիցների աշխատավարձը, գործուղման հետ կապված, մարքետինգային և խորհրդատվական ծախսեր, տարեկան հաշվետվությունների հրապարակման և աուդիտի, այլ ծախսեր, որոնք ուղղված են բարեգործություն ստացողներին:<br>Մասնավորապես՝<br>- Աշխատավարձ – 450,000,000 ՀՀ դրամ<br>- Մարքետինգային և խորհրդատվական ծախսեր – 200,000,000 ՀՀ դրամ<br>- Տրանսպորտային և ցործուղման ծախսեր – 300,000,000 ՀՀ դրամ<br>- Այլ ծախսեր – 50,000,000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | Հր 12/3 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ | ՀՀ վարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մշակույթի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՀ Սյունիքի մարզպետարան, Տաթևի տարածաշրջանի գյուղական համայնքներ, այլ պետական և տեղական իշխանություններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Տաթևի Վերածնունդ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդ, ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվությունների տեսքով, ՀՀ մշակույթի նախարարություն՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1069 -Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-625-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ) N 2

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 07/80-2/18088-14 և հոկտեմբերի 23-ի N 06/5-1/18064-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված բիտումը (8 տեղ, 187,250 կգ ընդհանուր քաշով, 113,287 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագրի մասին» N Մ-625-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1070 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 20-ի N 07/80-2/17662-14 և հոկտեմբերի 23-ի N 06/3-3/18042-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գիզա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00851914) հետ 2014 թվականի հոկտեմբերի 10-ին կնքված N 37 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջրա- և գոլորշամեկուսացման աշխատանքների իրականացում՝ 4,309,198 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1071-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՊՀ» ՊՈԱԿ-Ի ԵՎ «ԼՈՒՅՍ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԳԻՏԱԿԱՆ, ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 07/80-2/16810-14 և հոկտեմբերի 14-ի N 06/3-3/17177-14 ու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 02/7526-14, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 03/07-1/12289-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) կողմից իրականացվող՝ 100,000,000 դրամ ընդհանուր արժեքով «ՀՀ կրթության և գիտության նախարարության «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի համագործակցություն» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝

1) սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ՝ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ Կրթության և գիտության նախարարության
“Երևանի Պետական Համալսարան” ՊՈԱԿ
ռեկտոր Ա. Սիմոնյանի կողմից
.................................
................09............ 2014թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» ՊՈԱԿ-ի
և «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի
համագործակցության
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի շրջանակներում ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» ՊՈԱԿ (ԵՊՀ)-ն «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ»-ի կողմից հերթական անգամ նվիրաբերած գումարների հաշվին իր 5 բնագիտական ֆակուլտետների համար ձեռք է բերելու լաբորատոր և գիտա-ուսումնական սարքեր և նյութեր, որոնք տեղադրվելու են ԵՊՀ ֆակուլտետների լսարաններում և լաբորատորիաներում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային և մաքսային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ»<br>ք. Երևան, Չարենցի փ., շենք 70. բն. 114<br>ՀՎՀՀ 01563271 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» ՊՈԱԿ, 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՎՀՀ 01506928 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Երևանի Պետական Համալսարան» ՊՈԱԿ, Աշխարհագրության և երկրաբանության, Ֆիզիկայի, Դեղագիտության և քիմիայի, Կենսաբանության և Ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ամբիոններ, լսարաններ և լաբորատորիաներ: Բնագավառը՝ կրթություն և գիտություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | 100 000 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01,11.2014թ-ից մինչև 30.11.2015թ. |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 01,11.2014թ-ից մինչև 30.11.2015թ..-ի ընթացքում, 100 000 000 ՀՀ դրամի սահմաններում, արտասահմանյան և տեղական ֆիրմաներից ձեռք են բերվելու լաբորատոր և գիտա-ուսումնական սարքեր և նյութեր: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի համար ձեռք են բերվելու՝ Ռադիոտեղորոշիչ սարք, Առաձգական, ակուստիկ ալիքների անցման արագության որոշման սարք և այլն: Մոտ 20 000 000 դրամի:<br>2. Ֆիզիկայի ֆակուլտետի համար ձեռք են բերվելու՝ Յունգի մոդուլի որոշման լաբորատոր սարք, Ձայնի արագության որոշման սարք, Մեխանիկայի փորձերի համակարգչային վիզուալիզացիայի սարք, Կիսահաղորդիչային լազեր, Մինիդիֆրակտոմետր ըստ Դեբայ-Շերե-ի սխեմայի դիրքազգայուն դետեկտորով և այլն: Մոտ 20 000 000 դրամի<br>3. Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի համար ձեռք են բերվելու՝ Անալոգային և թվային ազդանշանների ճշգրիտ չափման սարք, Դիֆուզիոն վառարան և այլն:: Մոտ 20 000 000դրամի<br>4. Դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի համար ձեռք են բերվելու՝ Ծակոտկեն նյութերի տեսակարար մակերևույթի և ծավալների որոշման սարք, Ջրի ֆիզիկաքիմիական ցուցանիշների անալիզի լաբորատոր համալիր և այլն:: Մոտ 20 000 000դրամի<br>5. Կենսաբանության ֆակուլտետի համար ձեռք են բերվելու՝ Պոլիմերազային շղթայական ռեակցիա անցկացնելու բոքս Անկյունային ռոտոր, ֆլյուորեսցենտ տրինօկուլյար մանրադիտակ և այլն:: Մոտ 20 000 000 դրամի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, սարքեր և նյութեր վաճառող տեղական և արտասահմանյան ֆիրմաներ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Իրականացվում է ԵՊՀ Գնումների բաժնի կողմից, վերահսկվում է ԵՊՀ գիտական քաղ.-ն, միջազգ-ին համագործակցության գծով պրոռեկտոր՝ Գ. Գևորգյանի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակը մեկ հաշվետվություն է ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1072 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ**

(«ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 07/80-2/16853-14 ու հոկտեմբերի 9-ի N 06/5-1/16784-14 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N ԱՄ/22.2/10467-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված դեղերը (1 տեղ, 3 կգ քաշով, 372 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 9,000 հնդկական ռուփի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1073-Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 07/80-2/16809-14 և հոկտեմբերի 9-ի N 06/5-1/16782 -14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N ԱՄ/22.2/10452-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք և լաբորատոր ծախսանյութեր 1 արկղ, 15 կգ. քաշով, 275.77 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 317 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1074-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/17431-14 և հոկտեմբերի 16-ի N 06/5-1/17402-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N ԱՄ/22.2/10795-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ 117 տեղ, 709 կգ. քաշով, 44,037.69 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,804.47 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ԼՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1075 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) (3)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի սեպտեմբերի 26-ի N 07/80-2/15607-14 և սեպտեմբերի 24-ի N 06/5-1/15306-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռները (արևային ֆոտովոլտիկ վահանակներ, արևային վահանակների մոնտաժման դետալներ, արևային կայանի ինվերտոր և փոխակերպիչ սարք, էլեկտրական պղնձե մալուխներ, էլեկտրասնուցման մոնտաժային մասեր, ջրամեկուսիչ սպունգե ժապավեններ, շինանյութ՝ ջերմամեկուսիչ փրփրապլաստ՝ 457 տեղ, 11,671 կգ ընդհանուր քաշով, 109,077.43 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,735 եվրո, ՄԾՓ ՏՄ, էլեկտրասնուցման մոնտաժային մասեր՝ 99 տեղ, 17.48 կգ ընդհանուր քաշով, 4,793.8 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 9 եվրո, ՄԾՓ ՏՄ և ջրի մետաղական բաք, ջրասնուցման խողովակների մետաղական կցամասեր՝ 809 տեղ, 419 կգ ընդհանուր քաշով, 9,534.91 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 206 եվրո, ՄԾՓ ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N Մ-1047-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում;

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1076 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N Մ-912-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 11-ի N 07/80-2/-14 և հոկտեմբերի 6-ի N 06/3-3/16416-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 9-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 60 գյուղական համայնքներում» ծրագրի մասին» N Մ-912-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2013 թվականի օգոստոսի 12-ին կնքված AT-AU-052-13 պայմանագրում և հոկտեմբերի 1-ին կնքված եռակողմ համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2013 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2014 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,532,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1077-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-070-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» միջազգային օգնության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N 07/80-2/16318-14 և հոկտեմբերի 2-ի N 06/3-3/16306-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 2-ի N ԱՄ/22.2/10263-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 2» ծրագրի մասին» N Մ-070-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լամբրոն-Ֆարմիմպէքս » ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500036) 2014 թվականի սեպտեմբերի 16-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի գնում՝ 945,410 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1078-Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-899-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 6-ի N 1/01.3/12157-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 07/80-2/16754-14 ու հոկտեմբերի 13-ի N 06/3-3/17040-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 18.06.2014 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնի մասնաշենքի վերանորոգում» N Մ-899-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՆԱՄԵՆԱՍԵԴ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03309289) 2014 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված N «ՀՀ-ԲՆ-ԴԱՊ-ՊԸԱՇՁԲ-14/02»-ԿԲՀ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնի մասնաշենքի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 13,319,177 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1079 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N Մ-430-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N 1/01.3/12183-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 10-ի N 07/80-2/17012-14 ու հոկտեմբերի 14-ի N 06/3-3/17178-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 15.05.2013 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագրի մասին» N Մ-430-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2014 թվականի հոկտեմբերի 1-ին կնքված՝ N «ՇՀԱՊՁԲ-11/1 (ԿԲՀ-ԱԱՊ-ԱՊՁԲ 14/07) պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված բենզինի ձեռքբերում՝ 435,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1080Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի N Մ-796-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N 2/01.3/12147-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 7-ի N 07/80-2/16567-14 և հոկտեմբերի 13-ի N 06/3-3/17041-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 22.04.2014 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի օգոստոսի 1-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 22.04.2014 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2014 թվականի» ծրագրի մասին» N Մ-796-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀայրԿար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04110777) 2014 թվականի սեպտեմբերի 23-ին կնքված՝ N ԽԱՊԱՇՀԱՊՁԲ-11/7-14/2-Ա պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքների ձեռքբերում՝ 1,071,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 հոկտեմբերի 2014 թվականի N Մ- 1081 -Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (3)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 8-ի N ԱԿ/15/ 10456-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի N 07/80-2/17365-14 ու հոկտեմբերի 20-ի N 06/3-3/17626-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 02551144) և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06406394) 2014 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված՝ N ԳՀ ԲԸԱՇՁԲ-14/2-3 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 17,923,209 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2014 թվականի N Մ-1082-Ա

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի N Մ-366-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2014 թվականի հոկտեմբերի 24-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ բարերարների միջոցներով ձեռքբերված և «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի հասցեով ուղարկված երկու ավտոմեքենաները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 18-ի «Տիրամայր Հայաստանի դաստիարակության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-366-Ա որոշմամբ (2012 թվականի հունիսի 8-ի N Մ-418-Ա և 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-963-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) միկրոավտոբուս 9 տեղանոց՝ 2009 թվականի արտադրության MERSEDES-BENC VITO 115CDI մակնիշի, 1,810 կգ, 18,500 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, նույնականացման համարը՝ WDF63970313522551, ԱՄ ՄՋՄ ՄՏ.

2) մարդատար ավտոմեքենա՝ 5 տեղանոց՝ 2014 թվականի արտադրության NISSAN MURANO մակնիշի, 1,810 կգ, 9,500 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, նույնականացման համարը՝ JN8AZ08W14W318865, ԱՄ ՄՋՄ ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2014 թվականի N Մ - 1083 - Ա
(Որոշումն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 24-ի նիստին)
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՅՐԱՊԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 78 ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԱՐԶԱԴԱՀԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 07/80-2/17217-14 և հոկտեմբերի 15-ի N 06/3-3/17274-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 02/7708-14, Հայաստանի Հանրա-պետության կրթության և գիտության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 03/07-1/12538-14 ու Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 01/12.1/5534-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 8,591,442 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևան քաղաքի Հայրապետ Հայրապետյանի անվան թիվ 78 դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադահլիճի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նաիրիշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03300835) 2014 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N ՀՀ/Մ-01/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 8,461,442 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00080732) 2014 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N ՀՀՏՀ-05/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում՝ 80,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2014 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N ՀՀ-06/14 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 50,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«02» հոկտեմբերի 2014թ.

# «Հայաստանի Հանրապետության Երեւան քաղաքի Հ.Հայրապետյանի անվան թիվ 78 դպրոց» ՊՈԱԿ-ի մարզադաշտի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Երեւան քաղաքի թիվ 78 Հ.Հայրապետյանի անվան դպրոցի աշակերտների ուսման պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից գոյացած միջոցներ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Երևան քաղաք, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 8.591.442,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Հ.Հայրապետյանի անվան թիվ 78 դպրոց» ՊՈԱԿ-ը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2014թ սեպտեմբերի 17 -ից մինչեւ 2014թ.դեկտեմբերի 17-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2014թ սեպտեմբերի 17 -ից մինչեւ 2014թ.դեկտեմբերի 17-ը դպրոցի բակային տարածքում կառուցել մարզադաշտ 8.461.442,00 դրամ արժողությամբ Նույն ժամանակահատվածում աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության իրականացում 80.000,00 դրամ 50.000,00 դրամ համապատասխանաբար: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՆԱԻՐԻՇԻՆ» ԲԲԸ-ի կողմից «Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Հ.Հայրապետյանի անվան թիվ 78 դպրոց» ՊՈԱԿ-ի բակային տարածքում մարզադաշտի կառուցում 8.461.442,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Հազարաշեն» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների հեղինակային հսկողության իրականացում 50.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«Մոդեռննախագիծ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում 80.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |



Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը